Հաստատում եմ՝

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի

Գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

«05» հունվարի 2024 թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Մարտին Գագիկի Թովմասյանի «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ 1991-2008 թ.» թեմայով ատենախոսության պաշտպանության երաշխավորման վերաբերյալ

Հաստատվել է

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի 2024թ. հունվարի 4-ի նիստում: *Նիստին մասնակցում էին պատ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Յ. Մարուքյանը, դոցենտի պաշտ., ամբիոնի վարիչի պաշտ. Գ. Կ. Ղալաչյանը, պատ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Կ. Կարապետյանը, պատ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Հ. Մելիքյանը, պատ. գիտ. թեկնածու, դոցենտ Գ. Գ. Գևորգյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Ռ. Գ. Էլամիրյանը և քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Ն. Վ. Գևորգյանը:*

Մարտին Թովմասյանի «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ 1991-2008 թթ.» ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և եզրակացությունից: Ներածության մեջ հեղինակը ներկայացնում է թեմայի արդիականությունը և ձևակերպում գիտական նորույթը:

Թեման իրոք արդիական է՝ հաշվի առնելով վերջին շրջանում, հատկապես Կանցլեր Անգելա Մերկելի կառավարման տարիներին թափ առած հայ-գերմանական հարաբերությունները, ԳԴՀ առաջատար դիրքը ԵՄ-ում. ծանրակշիռ դերակատարությունը միջազգային ասպարեզում, հաստատված ժողովրդավարական ինստիտուտները և տնտեսական զարգացվածությունը: Ուստի, հայ-գերմանական փոխգործակցության հետագա զարգացման ուղենիշները սահմանելու նպատակով կարևոր է համապարփակ պատկերացում կազմել դրա պատմա-դիվանագիտական հենքի մասին, ինչը և ներկայացրել է ատենախոսը:

Մ . Թովմասյանն օգտագործել է ծավալուն պատմա-դիվանագիտական աղբյուրներ, արխիվային նյութեր, որոնք թույլ են տալիս համապարփակ վերլուծության ենթարկել ՀՀ և ԳԴՀ միջև հարաբերությունները հետխորհրդային ժամանակահատվածում՝ մինչև 2008թ.: Աշխատանքն էապես շահել է այն հանգամանքից, որ ատենախոսը տիրապետում է գերմաներեն լեզվին և օգտագործել է կարևոր գերմանալեզու աղբյուրներ, ինչը թույլ է տվել Մ. Թովմասյանին համապարփակ և խորքային վերլուծություն կատարել՝ դրանով իսկ հիմնավորելով աշխատանքի գիտական նորույթը: Աշխատանքի գլուխները տրամաբանորեն փոխլրացնում են միմյանց, եզրակացությունները բավականին հիմնավոր են: Հեղինակը վերլուծության է ենթարկել հայ-գերմանական հարաբերությունների տարբեր ոլորտներ, ինչը թույլ է տալիս ամբողջական պատկեր կազմել երկկողմ փոխգործակցության վերաբերյալ: Հեղինակի կողմից կատարվել է լուրջ աշխատանք, ինչը կարող է կիրառական նշանակություն ունենալ ՀՀ պատկան գերատեսչությունների համար՝ ԳԴՀ հետ հարաբերությունների հետագա ռազմավարությունը մշակելիս:

Աշխատանքի ուսումնասիրության ընթացքում առաջ են եկել որոշ դիտարկումներ, որոնք կարող էին ատենախոսությանը լրացուցիչ արժեք հաղորդել:

Անդրադառնալով ԳԴՀ քաղաքականությանը Հարավային Կովկասում՝ հեղինակը բերում է մի շարք հիմնավորված շարժառիթներ: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ անհրաժեշտություն կար խնդրո առարկան դիտարկել նաև ԳԴՀ հայեցակարգային փաստաթղթերի

ռազմավարությունների տեսանկյունից, մասնավորապես՝ Գերմանիայի Արևելյան քաղաքականության (Ostpolitik) պրիզմայով, որը նախատեսում էր Արևելյան Եվրոպայի երկրների, այդ թվում՝ ԱՊՀ նորանկախ պետությունների հետ հարաբերությունների հաստատում և զարգացում: Գերմանիայի փորձագիտական և քաղաքական շրջանակները նշում են, որ հենց Ostpolitik-ն է կարևոր գործոն հանդիսացել ԵՄ Արևելյան գործընկերությանը Գերմանիայի կողմից լուրջ աջակցություն ցուցաբերելու հարցում:

Կարծում ենք, որ աշխատանքն էականորեն կշահեր, եթե ատենախոսը խորքային վերլուծության ենթարկեր գերմանական քաղաքական հիմնադրամների՝ Կոնրադ Ադենաուերի, Հայնրիխ Բյոլի, Ֆրիդրիխ Էբերթի գործունեությունը Հարավային Կովկասում, մասնավորապես՝ Հայաստանում, քանզի նշյալ հիմնադրամները ոչ միայն լուրջ փորձագիտական վերլուծություններ են կատարել և կատարում տարածաշրջանի երկրների հետ համագործակցության վերաբերյալ, այլև էական ազդեցություն ունեն ԳԴՀ կառավարության կողմից որոշումների կայացման գործընթացի վրա, քանզի այդ հիմնադրամները ԳԴՀ քաղաքական կուսակցությունների հիմնադրամներն են և խորհրդատվություն են տրամադրում Գերմանիայի կառավարությանը:

Էջ 65-ում ատենախոսն անդրադառնում է ԳԴՀ կառավարության դիրքորոշմանը ԼՂ հիմնախնդրի վերաբերյալ՝ ժամանակագրական առումով այն հասցնելով մինչև 2020թ.: Ընդունելով, որ նշյալ ժամանակահատվածը չի հանդիսանում ատենախոսության ուսումնասիրության առարկան, այնուամենայնիվ, կարծում ենք, որ նպատակահարմար էր հակիրճ ներկայացնել ԳԴՀ դիրքորոշումը 2020թ.-ից հետո, հատկապես՝ ՄԱԿ ԱԽ նիստերի ժամանակ, երբ Գերմանիայի ԱԳ նախարարը խիստ քննադատության ենթարկեց Ադրբեջանին՝ այդ կերպ կոտրելով ԳԴՀ՝ մշտապես ներկայացվող հավասարակշռված և չեզոք դիրքորոշումը: Նշյալ ժամանակահատվածի հակիրճ վերլուծությունը թույլ կտար ամբողջականության մեջ դիտարկել ԳԴՀ կառավարության դիրքորոշման էվոլյուցիան ԼՂ հակամարտության հարցում:

Էջ 133-ում հեղինակը ներկայացնում է Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը ԳԴՀ-ում՝ ժամանակագրորեն այն հասցնելով մինչև 2010թ., 2013թ. ընդհուպ՝ մինչև 2015թ: Կարծում ենք, որ աշխատանքն էականորեն կշահեր և Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում ԳԴՀ կառավարության որդեգրած քաղաքականությունն ավելի ամբողջական կլիներ, եթե ատենախոսն ավելի ծավալուն անդրադարձ կատարեր 2016թ. հունիսի 2-ին ԳԴՀ Բունդեսթագի

կողմից ընդունված «1915թ. հայերի և մյուս քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանության հիշատակի և ոգեկոչման մասին» բանաձևին, քանզի առաջին անգամ 1915 թ. իրադարձությունները բնութագրվում էին որպես ցեղասպանություն: Այս բանաձևը շրջադարձային էր ԳԴՀ երկարամյա քաղաքականության մեջ:

Հեղինակը համապարփակ կերպով անդրադարձ է կատարել հայ-գերմանական համագործակցության տարբեր ոլորտներին՝ քաղաքական, տնտեսական, միջխորհրդարանական, կրթամշակութային: Պատկերն ամբողջացնելու համար, կարծում ենք, կարևոր էր անդրադառնալ նաև ռազմատեխնիկական համագործակցությանը, մասնավորապես՝ Գերմանիայում ՀՀ ՊՆ սպայական անձնակազմի ուսուցման և վերապատրաստման ծրագրերին, ինչպես նաև Աֆղանստանում Գերմանիայի հրամանատարության ներքո հայկական խաղաղապահ առաքելությանը:

ՀՌՀ համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնը որպես առաջատար կազմակերպություն գտնում է, որ նշված դիտարկումներն առաջարկներ են, որոնք կարող են հարստացնել ատենախոսությունը և որևէ կերպ չեն նվազեցնում աշխատանքի գիտական նշանակությունը, և ***Մարտին Գագիկի Թովմասյանը*** արժանի է պատմական գիտությունների թեկնածուի աստիճանին:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
համաշխարհային քաղաքականության
և միջազգային հարաբերությունների ամբիոնի

վարիչի պաշտ., դոցենտի պաշտ. /Գ.Կ. Ղալաչյան/

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ.Կ. Ղալաչյանի
ստորագրությունը հաստատում եմ
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

գիտական քարտուղար
բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Կասաբաբովա